



ՕՐԱԳԻՒ

ԵՎՐՈՅԵՆԻ, ԲԵԼՈՒՍԻՐԱԿԱՆ, ՏԵՂՄԱՆԱԿԱՆ

ԵԿ

ԲՈՒԿԻՆ ԳԻՏԵԼԵՐԸ

Ե · ՏԱՐԻ, ԹԻՒ 11 ·

1847

ՑՈՒՆՏՍԻ 1 ·

ԲԱՐՈՑԱԿԱՆ

ԱԽԵԼՈՐԴԱՊԱՇՏՈՒԹԻՒՆ

Դ ·

Առաջ գիտութիւնն և արուեստ :

ՎԵՑՀԱԶԱՐԵԱԿ ԿԱՄ ԵՕԹՆԱԳՐԵԱՆՔ :

ՈՒՆՉԴԵՌ ՀԱՄԱՅՈՒԹԵԱՆց և աս-
տղագիտութեան վրայ կը գրենք կոր,
վեցհազարեակին վրայ բան մը չզրու-
ցած անցնիլ չուզեցինք . որովհետե-
այս գիրքս հռչակաւոր եղած է, և
արժանի սեպուեր է արդելուելու :
Ուստի կը բաղձայինք որ արժանի ալ-
ըլլար քննութեան կամպարսաւանաց.
թէ և մոլար և խարեւական, գոնէ
կանոնաւոր և իմանալի բան մը ըլլար :
Լարդալով միայն աս իմացանք որ
փուծ խարեւական և յետին աստիճան
տգէտ մարդու մը գործք է . և ոչ ար-
ժանի կը սեպէինք յիշատակելու , թէ
որ իբրև կախարդութեան գիրք ա-
նուանի եղած ըլլար :

Չատ մարդիկ վեցհազարեակին
անունը միայն լսած են, և տեսած
ըլլալով՝ համարում կրնան ունե-
նալ վրան . և մենք ալ չէինք քններ,

թէ որ մեր ազգի աստղագիտութեա-
նը վրայ տեղեկութիւն մը ստանալու
և ստութիւնը ազգին յայտնելու բազ-
ձանքը չգար մտքերնիս : Ուստի հարկ
համարեցանք ծանօթութիւն մը տալ
որպէս զի անձոռնութիւնը իմանան .
զի բաց յայսմանէ և խառնախօսու-
թենէ ուրիշ բան մը չկայ այն գրուա-
ծին մէջը :

Ի՞յս գիտութիւնս որ իսկզբանէ
աշխարհիս մինչեւ 'ի վերջը եղած և
ըլլալիքը կը խոստանայ մարդարեա-
նալ, տեսնենք թէ ինչ կանոններով
և ինչ հրաշալի հաշիւններով կրնայ կոր
գտնել : Ի՞յց մի՝ կարծեր թէ դժուա-
րին բան մըն է, այլ ամենուս գիտցած
և ամէն օրուան կարդացած և գրած
գրերնիս է այս հրաշքները ընօղը .
Ո՞եր այբուբենին եօթը ձայնաւոր-
ներուն կը խոստանայ զրուցնել տալ

տասուերկու հազար տարուան մէջ եղած և ըլլալու բաներուն գուշակութիւնը . և այս բանիս ապացոյց կ'ըսէ թէ մէկ գիրը տասուերկու հազար ձառ կը խօսի : Ի՞այց ուր էր որ 11999 վար երթար և մէկը խօսէր, որ մենք ալլէինք և իրեն պէս զմայլէինք :

Դրբին սկիզբ՝ երսունըվեց բաժնուած բոլորածե մը կայ, և եօթը ձայնաւորները ամէն մէկ խորշին մէջ եօթնական անդամ կրկնուած, որուն բացատրութենէն ոչ բան մը կը հասկըցուի և ոչ բան մը կ'ելլէ . և ազիւսակին տակը կը գրէ . “ Ի՞ցամայ մինչեւ ’ի ԱՌովսէս, ’ի ԱՌովսիսէ մինչեւ ’ի Դաւիթ, ’ի Դաւիթայ մինչեւ ’ի ՔՌ, ’ի Վիրիտոսէ մինչեւ ’ի միւսանգամ գալուստնկարէ գիտելայս եօթն գրովս . . . Ի՞այց աւելի զօրաւոր կ'ըլլար խօսքը թէ որ մէկ քանի գուշակութեան օրինակներ տար, կամ եղած և յայտնի մէկ քանի բան մը իբրև չեղած սեպելով՝ իւր այբուբեններով և աղիւսակով գտնէր և ապացուցանէր . ինչպէս օրէն է ամենայն գիտութեանց մէջ փորձով և օրինակով ըսածը հաստատել : Ի՞այց ինչ կ'ըսեմ . միթէ անմտութիւնը և յիմարութիւնը փաստի կարօտ է . միթէ ինքն իրեն բաւական ապացոյց չէ :

Ինչպէս կ'երենայ, այսպիսի փորձի մտնել չհամարձակելով, միայն խոստմունք և վեցհազարեակ գիտութեան գովեստ ընելով կ'ըսէ . “ Որ մտանէ (վեցհազարեակին մէջ), լուսաւորի, և որ մտաւոր է և իմաստուն՝ կարդայ զսա . . . Ուեպէտ կարդացինք և մը տանք մէջը, բայց աչքերնիս խաւարեցաւ, և գրողին պէս տգէտ ելանք . զի ոչ բաւական մտաւոր էինք և ոչ իմաստուն :

Չէ թէ միայն տգիտական են այս գրքիս մէջի հաշիւները, խաւնափընդոր՝ անիմանալի, այլ և անձունի աշարօղութիւնով լեցուն : Ուստի կ'ապըսպէ՝ հինգ օր երրորդութեան անունը գրէ, ջրի կամ գինիի մէջ խառնէ, և կուլ տուր և եօթը ձայնաւորնե-

ը գրէ, և անոնք ալ կուլ տուր, հրեշտակներուն և մարգարէներուն անունը գրէ, և անոնք ալ կուլ տուր . և այսպէս հրեշտակները և մարգարէները, կ'ըսէ, “ Խօսինընդ քեզ առանց հետոյ զանձառելի բանս՝ որ ոչ եւ լսել . խօսիս գոււերեսուն և վեց հազար ձառս . գոււուն լուսոյ է այս . . . Եւ ասոնց պէս ափեղցիեղ խօսքէր : Ի՞սկէ վերջը ամէն մէկ եօթը ձայնաւորները մէյմէկ հրեշտակի կը յարմարցնէ, մարգուս եօթը գործարանքներու, շաբթուան եօթը օրուան, եօթը մոլորակներուն, և այլն . և ինչ որ աշխարհքիս վրայ եօթը թուով բան կրնայ գտնուիլ պիտոր յարմարյնէ :

Տգէտ հեղինակը աս գրքիս համարում տալու համար՝ այսպէս կը համարձակի գրէլ . “ Այս արուեստ վեցհազարեկին է, զոր գովեաց Անանիա շիրակացի և ասաց, գանձ ծածկեալէ յերկրին հայոց և ակն թագուցեալէ ’ի տանն Ուորգոմայ . զի մայր է սա ամենայն իմաստութեն . . . Այս ստութիւնս բաւական չսեպելով՝ այսպէս կը լըմնցնէ գիրքը . “ Վերականութիւնս որ կոչի եօթնագրեանք, զուգեալ ’ի Դաւիթ անյաղթ փիլիսոփայէ . . . և այլն : Որովհետեւ եօթը ձայնաւորաց վրայ հիմնած է այս խորին գիտութիւնս, ուստի ողորմելի հեղինակը քերականութեան մէկ մասը կարծեր է . այլ երանի կ'ըլլար, թէ որ քերականութեան ծանօթ ըլլալով իմանար, որ թէպէտ ձայնաւորները մեծ զօրութիւն ունին ընթերցման և հնչման մէջ, այլ անկէ զատ կարողութիւն մը չունին . և ոչ երեք սըրբոյն ԱՆԵՐՈՍՊԱՅ մոքէն անցած է, թէ հնարած գրերը՝ որ ազգին լուսաւորութեան պատճառ եղաւ, որ մը անմտաց և յիմարներու ձեռքը այս պիսի խարեւութեան պիտոր գործիքը ըլլայ :

Հեղինակը, ինչպէս կ'երենայ, ’ի սկզբանէ աշխարհքիս վեցհազար տարուան միջոցին մարգարէութիւնը ընել խոստանողով, այս գրքիս անունը

վեցհազարեակի արուեստ ալ դնել
արժանի համարեր է : Ի՞նչ ուրիշ
տեղ մըն ալ, ինչպէս վերը ըսինք,
տասուերկու հազար տարուան մար-
գարէութի ընել կը խոստանայ . ուս-
տի ինչ ըսել կ'ուզէ՝ կրնաս նէ ի-
մացիր :

Ի՞չ ասոնք են այն երեւելի գրքին
մէջի եղած խորին գիտութիւնը, որ
ոմանք միամիտ մարդիկ գուցէ կար-
գալով և բան մը չկրնալով սորվիլ, ի-
րենց անմտութեանը կուտան . այլ
ամենեին չցաւին այս բանիս վրայ .
զի ոչ ոք կարօղ է և ոչ կրնայ ըլլալ
բան մը ըմբռնել և իմանալ : Օի
տես որ հին օրինակօղին մէկն ալ, որ
փոյթ տարեր է գրելու և սորվելու,
ան ալ կը վկայէ ու կը խոստովանի որ
բան մը չէ կրցեր հասկրնալ և սորվիլ,
այսպէս նշանակելով լուսանցը, թէ
Ի՞ազում աշխատ եղաք, և ոչինչ կա-
լաք . մի միայն Ճշմարիտ խօսքն որ բո-
լոր գրքին մէջ կը գտնես : Իշ որով-
հետեւ գրքին սկիզբէն մինչև վախճա-
նը ստութիւն և խաբէութիւն է,
ուստի այս Ճշմարիտ խօսքս ալ չեր
վայլէր հեղինակին բերանը . ինչպէս
որ ալ հեղինակինը չէ :

Չ ատ աղէկ կ'ըլլար որ այս գիրքս
Հայաստանու մէջ գործածուած կա-
խարդութեանց անունները և ինչպէս
գործադրուիլը պատմէր . գոնէ ասով
մէզի մէկ տեղեկութեան և հմտու-
թեան նիւթ մը կ'ըլլար : Ի՞այց միթէ
իւնթ և տգէտ մարդէ մը օգուտ
կրնայ մի յուսացուիլ :

* *

Նուբագւարուսուագը նոր տգիտութիւն մըն է՝
միր բնական տգիտութեանը վրայ պատուաստած .
բնականին պատուզն է ցաւալի խեղձութիւն, պա-
տուաստածինը նաև զլուելի ու գժուարաբուժե-
լի հիւանդութիւն :

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ

ԱԶԳԱՑԻ ՄԱՏԵՎԱԳՐՈՒԹԻՒՆ

Ո՞ւր աշխարհաբառին նշջ մրած տանի մը օ-
դարանքի մասնիչներու կը ։ — Լոր, Ո՞ի :

ՃՇՄԱՐԻՏ է որ ինչ և իցէ լեզու
մը յստակ մաքուր և ազնիւ ըսուելու
համար՝ բաւական չէ որ օտարազգի
բառերը գուըս ձգէ ըստ կարի, հա-
պա պէտք է որ օտար լեզուի ոճեր
կամ դարձուածքներ ալ չունենայ :
Ուստի մեր աշխարհաբառ լեզուն ալ
եթէ կ'ուզենք մաքրել ազնուացընել
ու գրաբառին կամաց կամաց մօտե-
ցընել, բաւական չէ միայն տաճկի
կամ ուրիշ լեզուի բառ ըրանեցընելը,
պիտի նայինք որ օտար ոճ կամ դար-
ձուածք ալ չգործածենք : Տարակոյս
չկայ որ աս աշխատանքը, այսինքն օ-
տար լեզուի դարձուածք և ոճ չըա-
նեցընելը շատ աւելի դժուար է՝ քան
թէ օտարազգի բառերէն զգուշանա-
լը . ինչ կ'ըսեմ դժուար . անկարելի
ալ է մէկէն 'ի մէկ փոխել աս մեր աշ-
խարհաբառին ոճը՝ թէ որ կ'ուզենք
որ գրածնիս կամ խօսածնիս հասկը-
ցուի . և սակայն ան բանն որ մէկէն
չըլլար, կամաց կամաց շատ գիւրաւ
կը յաջողի : Ի՞ս նիւթիս վրայ խօսքը
երկընցընելը աւելորդ կը համարինք
հոս տեղս . մանաւանդ որ գեռ նոր
կարգացած են մեր ուսումնասէր ըն-
թերցողքը Ի՞ազմավիսիս փետրուար
ամսուն մէջ ամբողջ կատակերգու-
թիւն մը այնպիսի խառնավնդոր լե-
զուով ոճով գրուած, և անշուշտ ի-
րենք ալ Ի՞ազմավիսիս գե-
ղեցիկ խորհրդածութիւնն ընելով՝
թերեւ ոչ այնչափ ծիծաղած ըլլան
նիւթին ծաղրականութեան, որչափ
զուրցուածքին խառնակութելը վրայ,
գիտնալով որ խաղին նիւթը ըստ մա-
սին շինծու ալ է նէ՝ անոր լեզուին
խառնակութիւնը ցաւալի Ճշմարտու-